

ԵՎՊԱՏՈՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Ղրիմի թերակղզու արևմտյան մասում գտնվող Եվպատորիա քաղաքը իր գոյության 2500 տարվա ընթացքում բազմիցս ենթարկվել է նվաճողների և ապատակողների ավերիչ ներգործությանը և ամեն անգամ վերածնվելով հերթական արշավանքներից հետո, վերականգնվելով, ձեռք է բերել պատմական նոր կերպար: Բոլոր այդ կարգի փոփոխությունների հետևանքը եղել է բազմաթիվ ճարտարապետական կոթողների ստեղծումը, որոնց մնացորդները պահպանվելով, հասել են մեզ և այժմ կազմում են քաղաքի ճարտարապետական և մշակութային կերպարի հիմքը:

Հիմ քաղաքներից շատ քչերին է վիճակվել անաղարտ պահպանել ստեղծված ընդհանուր ուրվագիծը, որի պահպանման մեջ որոշակի դեր ունեն պատմական և ճարտարապետական հուշարձանները: Այդ տեսակետից Եվպատորիայում քիչ թե շատ դեռ պահպանվել են հիմ քաղաքի համար բնորոշ նեղ, ծուռ ու մուռ փողոցներ, հիմ շենքերի մնացորդներ և որոշակի կարելի է նշել մի շարք պատմական կառուցվածքներ, որոնցից նշանավոր է Սինան ճարտարապետի՝ 16-րդ դարում ստեղծած Ջումա-Ջամի մզկիթը¹:

Բացի մզկիթից, պահպանվել են նաև մի շարք այլ հուշարձաններ, որոնք բնորոշում են քաղաքը որպես հիմ, պատմական կառույցներով հարուստ քաղաք:

Ցավոք, արխիվային նյութերը շատ քիչ տեղեկություններ են սփռում հայերի գործունեության վրա այդ քաղաքում, սակայն

լավագույն վկայությունը տալիս է ճարտարապետական կոթողի առկայությունը:

Եվպատորիայի Ս. Նիկողայոս հակական եկեղեցին² գտնվում է քաղաքի կենտրոնական թաղամասում: Ըստ կոնստրուկտիվ սխեմայի, պատկանում է գմբեթավոր բազիլիկաների տիպին: Եռանավ բազիլիկան կրել է ութ միստ ունեցող գմբեթը, որից միայն հիմքն է պահպանվել: Չորս կողմից պուրների և պատերին կից որմնամույթերի վրա հենվում է ամբողջ կամարների համակարգը: Անցումը գմբեթատակ քառակուսուց դեպի ութ միստ թմբուկի հիմքը իրականացված է առագաստների միջոցով: Երկու առագաստների վրա պահպանվել են բավական ոճավորված վարդյակներ, վերցրած օվալ շրջանակի մեջ, իսկ մյուս երկու առագաստների վրա պահպանվել են միայն օվալ շրջանակները, առանց վարդյակների: Ներսի պատերը, թաղերը սփառված են և սպիտակեցված: Որմնակարների հետքեր չեն երևում, սակայն այդ հարցին միանգամից կտրուկ պատասխանել, առանց հատուկ մասնագիտական քննության և հատուկ մաքրման աշխատանքներ կատարելու, չի կարելի:

Կենտրոնական նավը մինչև ավագ խորանը ունեցել է ուղղանկյուն հատված (նկ. № 1), որի մեջ տեղադրված են՝ հյուսիսային կողմում մի պատուհան և լայն բացվածք, որի մեջ տեղադրված փայտյա աստիճաններով բարձրանում էին երկրորդ հարկի խորանը, որը իր հերթին լայն բացվածքով կապված էր եկեղեցու ընդհանուր դահլիճի հետ: Հարավային մասում նույն-


¹ В. Драчук, Я. Кара, Ю. Чалышев, Керкина-да—Гезлев,—Евпатория, Симфереполь, 1977, стр. 66.

² Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, 1801—1917, Երևան, 1970, էջ 456:

պես բացված է ավելի մեղ բացվածք, դարձյալ երկրորդ հարկի խորանը տանող փայտյա աստիճաններով, սակայն վերակառուցումների հետևանքով դահլիճի հետ կապող բացվածքը փակվել է, և առաջին

կարծես զբաղեցրել է արսիդի տարածությունը, որից վերջինս հատակագծում ստացվել է ոչ լրիվ կիսաշրջան:

Ներսում, արևմտյան հատվածում, թե՛ հյուսիսային և թե՛ հարավային պատին



Նկ. 1. Եվպատրիայի Ս. Նիկողայոս եկեղեցու հատակագիծը
(Արձանագրային չափագրությունը Յու. Թումանյանի)

հարկը օգտագործվում է որպես պահեստի մի առանձին մաս:


Բեմի առջևի ուղղանկյուն մասը, չնայած այն հանգամանքին, որ արսիդը եկեղեցու ընդհանուր ծավալից դուրս է դրված,

կից պատուհանների արանքում, պահպանվել են մոտ. երկու մետր բարձրությամբ մեկական որմնամույթեր, որոնց դերը պարզել չհաջողվեց և միայն ենթադրաբար կարելի է ասել, որ դա կա՛մ շինարարական

բացթողում է, կա՛մ ինչ-որ վերակառուցման արդյունք:

Հետաքրքրական են գմբեթը կրող չորս սյուները, որոնք կյոր են, ունեն հայ ճարտարապետության համար ոչ բնորոշ խո-

նկեղեցու ճակատները բավական լավ են պահպանվել և բոլոր բաղադրամասերը համեմատաբար լավ վիճակում են: Եկեղեցին ունեցել է երեք մուտք: Հարավային, հյուսիսային և արևմտյան պատին պահ-



Նկ. 2. Եվպատրիայի Ս. Նիկողայոս եկեղեցու հյուսիսային ճակատը

յակ, ուր թակաղակի և խոյակի հիմքի միջև հարթ մասը քիչ թե շատ հիշեցնում է անտիկ ճարտարապետությանը հատուկ խոյակ, սակայն առանց ականթի տերևների: Սյան բնի տրամագիծը կազմում է շուրջ 80 սմ.: Սյունը բարակացում չունի: Խարիսխը կազմված է ոչ բարձր քառակուսի սալից և կյոր տրամատ ունեցող մի շարք իրար հաջորդող շերտերից: Սյան բարձրությունը կազմում է մոտավորապես 5—6 մ:

Քանդված թմբուկի բացվածքը, ութ միստին անցնելուց հետո, այժմ փակված է տախտակամածով և ամբողջ կենտրոնական մասը վերցված է մի ընդհանուր երկթեք ծածկի տակ:

Հիմնական կամարները իրար միացված են մետաղական ձգաններով, որոնք իրենց վրա են վերցնում կամարների հրող ուժերի մի մասը: Բազիլիկայի նավերը ծածկված են գլանաձև թաղերով, սակայն արևմտյան մասում թաղերի հատման գիծը անհասկանալի ձևով ստացել է խաչաձև թաղերի հատում հիշեցնող պատկեր:

Կանված շաղախի հետքերը վկայում են կից կառուցվածքների առկայության մասին: Դրանք կարող էին լինել զանգակատան կամ ճոխ ջրամուտքի մնացորդներ, մանավանդ որ այդ տեղերում քիվերը ինչ-որ վերակառուցման են ենթարկվել: Երեք ճակատներում պահպանվել են պահուսակներ, բավական նուրբ տրամատով, որոնք նույնպես վկայում են կից կառուցված նախաբահի կամ այլ կառուցվածքի մասին (նկ. № 2 և 3):

Արևելյան արսիդի պատուհանի վերևի մասում պահպանվել է որմնի մեջ ագուցված փոքր՝ 20×25 սմ չափի խաչքար (նկ. № 4): Այդ խաչքարը ևս նպաստում է կառուցվածքը, իր ճարտարապետական ձևերով, լիովին հարազատ համարել հայկական ճարտարապետությանը:

Ծեռքը կառուցված է կանոնավոր սրբատաշ սպիտակավուն, տրախիտ հիշեցնող քարից, որի հանքերը շատ են հանդիպում Ղրիմում: Թմբուկի լուսամուտները չեն պահպանվել, բայց շատ հավանական է, որ ամեն մի միստ ունեցել է մեկական

պատուհան: Այսպիսով, եկեղեցին լուսավորվել է՝ արևելքից մի պատուհանով, հյուսիսից և հարավից՝ 18 պատուհաններով, և արևմուտքից՝ երեք պատուհաններով:



Նկ. 3. Եվպատորիայի Ս. Նիկողայոս եկեղեցու հյուսիսային ճակատի դրվագը

րով: Ինչպես երևում է, ներսի տարածությունը եղել է լավ լուսավորված: Լուսամուտները իրենց ձևով և բացվածքով եղել են տարբեր, սակայն բոլորն էլ լայն են և առատ լուսավորել են ներսի տարածությունը: Ներքևի շարքի պատուհանները ուղղանկյուն են, մշակված երեսակալով, որ, երեսակալի հորիզոնական բարավորից հետո, ավարտվում են կլոր պսակով, որի վերևի մասը ունի պաքաձև վերջավորություն (նկ. 5):

Ծառ հավանական է, որ դա տեղական ոճի ազդեցության արդյունք լինի, սակայն Ղրիմի հայկական մի շարք հուշարձաններին պահպանվել են նման պսակներ, օրինակ՝ Թեոդոսիայի Ս. Հովհաննես-Աստվածաբանի եկեղեցուն, Հրեշտակապետաց եկեղեցուն և այլ հուշարձաններում: Լու-

սամուտների վրա տեղադրված է մետաղական ցանց: Կլոր պատուհանները տեղադրված են հյուսիսային և հարավային ճակատներում՝ ուղղանկյուն լուսամուտների առանցքով, նրանց վրա: Օժտված են կլոր, ավելի պարզ տրամատ ունեցող պսակով և խաչաձև տեղադրված մետաղական ձողերով, որոնք ցանցի դեր են կատարում: Հարավային և հյուսիսային ճակատների արևելակողմ ուղղանկյուն լուսամուտները, ճակատի ցածրանալու հետ կապված, իրենց վրա չունեն կլոր պատուհաններ: Հյուսիսային ճակատի երեք պատուհանները քարով շարված են և դրա պատճառով ներսում լույսի պակասություն է զգացվում: Արևմտյան ճակատի պատուհանները նույնպես շարված են:

Արևմտյան ճակատին առանձնանում է ոչ առանցքով, շեղ և համարյա քիվի տակ տեղադրված պատուհանը՝ կիսակլոր պսակով: Ամբողջ պատուհանը վերցրած է ուղղանկյուն շրջանակի մեջ և պատի երեսից մի փոքր խոր է դրված: Ծառ հետաքրքիր է պատուհանի այդօրինակ տեղադրումը:

Մուտքերի վրա եղել է իրականացված լյուներ, ինչպես մի շարք հայկական ճարտարապետական հուշարձաններում (Ավանի տաճար): Ծքամուտքերի ճարտարապետական մշակման մեջ նկատելի են անտիկ ճարտարապետությունից փոխառված նրմուշներ—տրիգլիֆներ:

Արևմտյան մուտքի լյուների մեջ արված է ուղղանկյուն խորշ, որը, հավանական է, նախապատրաստված է շինարարական արձանագրության համար: Կարող է և այնտեղ՝ սվաղի շերտի տակ մնացել է այդ արձանագրությունը: Մուտքերի սեպաձև բարավորների փականի քարը ներքևում ունի կիսակլոր ելուն:


Հարկ ենք համարում նշել արձանագրությունների բացարձակ բացակայությունը, որը շատ է դժվարացնում նրա կառուցման ժամանակը որոշելու հարցը: Այնուամենայնիվ ենթադրաբար կարող ենք նշել XIX դարի 30-ական թվականները, սակայն որևէ ստույգ տվյալ ճարտարապետական առումով մեր ձեռքի տակ չունենք:

Պահպանվել է մի պատմական տեղեկություն, որի համաձայն՝ «Եվպատորիայի Ս. Նիկողայոս եկեղեցու եկամուտները ու ծախսերը շատ են, որովհետև եկեղեցու շինարարությունը, որը տարիներով ձգձգվում էր, մեծ գումարներ էր պահանջում»³:

՝ Վ. Միքայելյան, նույն տեղում, էջ 151:

Այս տվյալները վերաբերվում են 1882—1842 թվականներին, ուստի հենց անցած դարի 30-ական թվականները կարելի է համարել կառուցման տարեթիվ:


վել է վերափոխման, սակայն հետքերը չեն պահպանվել: Պահպանվել է միայն հուժկու կոնտրֆորտի մնացորդը: Արևմտյան մուտքի մոտ պահպանվել է մի խա-



Նկ. 4. Եվպատորիայի Ս. Նիկողայոս եկեղեցու արևելյան ճակատը

Ծեմքը պատկերված է բավական բարդ տրամատ ունեցող քիվով, ուր աչքի են ընկնում երկու իրար վրա տեղադրված ատամիկների շարքը, որի արանքում տեղադրված են կիսակլոր և ուղղանկյուն տրամատները: Հուշարձանի սկզբնական տանիքը չի պահպանվել: Արևմտյան ճակատում քիվը ընդհատված է և կենտրոնական մասը մի փոքր բարձրացված: Այդ մասում նկատվում է, որ տանիքը ենթարկվել է փոփոխությունների:

Թմբուկի քանդման հետ իրականացվել էր նոր տանիք, որը արևելյան մասում իջեցված է, իսկ արևմտյան ծածկված է առանձին ծածկով: Տանիքները ծածկված են էտեռնիտով: Սակայն մեզ համար չպարզվեց՝ նախնական տանիքից ի՞նչ մնացորդներ են մնացել, որը հնարավոր է պարզել՝ կատարելով քանդման և մաքրման աշխատանքներ: Ըստ տեղացիների պատմածի, շրջապատը եղել է բավական բարեկարգ, եղել են խաղողի թարմաներ, պտղատու այգիներ, իսկ այժմ ոչինչ չկա: Հյուսիս-արևմտյան անկյունը ժամանակին ենթարկ-



Նկ. 5. Եվպատորիայի Ս. Նիկողայոս եկեղեցու պատմամանի պատկի վերին մասը

րիսխի մնացորդ, անտիկ ճարտարապետությունը հիշեցնող տրամատով:

Պատմական կառուցվածքի տեխնիկական վիճակը առանձնակի վտանգ չի հարուցում, միայն հարավ-արևմտյան անկյան տակ ստեղծված է խորշ, որը կարող է վատ հետևանք ունենալ: Բացի դրանից, ջրհեռացման հարցերը միշտ չէ, որ ճիշտ են լուծված, հատկապես հարավային պատի տակ: